ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՆՐԱԻՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԵՐ

18 ՅՈՒԼԻՍ | Ք· ՏԱՐԻ 1864 | ԹԻՒ 41

Կը հրատարակուի երկու անգամ մը ԸՈՒՐԱԹ օրերը։
Բաժանորդագրութեան գինը տարեկան 3 արծաթ Ազգային Կանխիկ։
Մեկ թիւը 4 դրուշ։
Դուրս երկրէ ուրագրոյ ծախքը առանձին վճարի է։
Յայտարարութիւնները տարօրէն առաջին անգամուն համար կ՚ընկնին։
Յայտարարութեան պետն է Մխիթարեան տպարան։

Գործերը Գործակալներն են·
ԶՄԻՒՆԻԱՅԻ· Գրիգոր աղա Պարտիզպանեան։
ՆԻԿՈՄԻԴԻԱ· Մելքոն աղա Վահէ Տ· Աբիւտալէպեան։
ՏՐԱԳԻԶՈՆ· Խալտարար աղա Էլմասեան։
ԿԱՐԻՆ· Պետրոս աղա Օյնեցի Վերապետութ Ընդհերցարանին կարգով։
ԹԵՒՐԻՏԶ· Մ· Պետրոս աղա Մ· Յովնանեան։

ԸՈՒՆՉՆՈՐԴ ՄԸՐՑ

ՆԱՄԱԿ Գ·

Թէ Բրիտանիոյ-իւ-ը ի՞նչ պղեցո-իւ-ն ունի կնոջ վիճակին վրայ։ Անգլիական պղեցո-իւեան օրինակներ։

(Շարունակութիւն 40 թիւէն)

Ամենասիրելի քոյր

Քանի որ ներկայ դարուս մէջ Քաղաքակրթութիւնը հակայաքայլ կը յառաջանայ, և գիտութիւնք ու արուեստք ամէն կողմ կը տարածուին, ամօթալի բան մը պիտի ըլլար, թէ որ մեզի մէնք մեր օգնութիւնը չմատուցանէինք ասոր յառաջադիմութեանը, և բարի նախանձաւորութեամբ Նախախնամութեան մեզի յանձնած բարձրագոյն պարտքը կատարէինք։

"Կինը ի բնութենէ նաննաւորած ահմանուած է" գաղափարը հինն աշխարհին ալ ընդունելի էր։ Նոյն Արիստիպպոս իւր մօրմէն դաստիարակուցաւ, և թէև իւր խնամատարութեանը համար ամէնքը կը յարգէին զինքը և կը պատուէին, բայց ինքնիրեն պատիւ մը համարած էր հայրականի անուանիլը։ Խնամատուն Հռոմայեցին Քինտիլիանոս կ՚ըսէ թէ Քրակկոսեանց եղբարց պերճաբանութեանը համար պէտք է ասոնց աղնիւ մօրը Կոռնելիայի երախտապարտ ըլլանք, որ Հռոմայոց մէջ հրապարակաւ փիլիսոփայութեան դասախօսութիւն բնաւորելն ալ գարձեալ իւր զաւակները կրթելու և դաստիարակելու հոգ տարաւ, զորս իրաւամբ իւր մարգարիտներն ու գանձերը կ՚անուանէր։ Սուրբն Ջերոնիմոս ալ ասոնց համար միևնոյն վկայութիւնը կուտայ· Քրակկոսեանց պերճախօսութիւնը իրենց մօրը լեզուաիւրնէն ու յատակախօսութենէն կատարելագործեցաւ։ Ըստ Քրիսոստոմոսեան լուսոյն մէջ ապրող մայրերը իրենց պարտուց կատարմանը մէջ հեթանոսաց մայրերէն աւելի սաստիկ պիտի ըլլային։

Քրիսոստոմոսեան լուսոյն ապրող մայրեր ըսինք, որովհետև կանայք Քրիսոստոմոսեանէն որչափ բարիքներ կ՚ընդունին։ Արմատը յաւիտենական երջանկութեան համար մեզի սըւած բարձր յոյսերէն զատ՝ կը լսնաւորէ նաև մեր միտքը, որուն միջոցաւ Նախախնամութեան՝ ընկերութեան մէջ մեզի համար նախասահմանած բարձր վիճակին կը հասնինք։ Քանզի աշխարհիս սկիզբէն ի վեր մարդկային սերունդն վիճակը աչքերնուս առջև առնելու ըլլանք նէ կը գտնենք, որ մարդս քանի որ իւր ճշմարիտ Արուեստն ու Բարիչը չէր ճանչցեր կամ անոր օրէնքները կը մերժէր, այնչափ ալ կանայք կ՚անարգուէին։ Թէ որ կ՚ուզես, Քրիսոստոմոսեան լոյսը չծագած աշխարհի մէջ կանանց վիճակը աւելի դիտեմ համառօտիւ։ Խուզարկէ նախ Եգիպտոսի և Հռոմայի հին պատմութիւնները, և դիտէ անկամ մը թէ Քրիսոստոմոսեան ասոնց մէջ չմատած որչափ բարքերը ապականեալ էին, և որչափ անուշութիւնը ինչ ատոնց մէջ չատճան յատակացած էր կանանց սեռին մէջ· և եթէ ասոնց մէջէն մէկ քանիներ գտնուէին աղէկ, ասիկայ մէկ բա-

ցառուԹիւն մը կը սեպուի : Դիտէ նաև Ա-մերիկայի օրդեսպան կանոնոյ գժբաղդ վիճա-կը որ մինչև ցայսօր կը տևէ գեռ : Առիկ ըսէ-ինչ կ'ըսէ առանց համար ապժանահաւատ ձա-նապարհորդ մը : Երբ հիւսիսային Ամերիկայի մէջ կը ջրջէի , կըսէ , անգամ մը իրենց ազգիկ մանկիկները ապաննող մարդ մէկուն պատահե-ցայ , և իրեն հետ խօսելով հարցուցի Թէ . ի՞նչպէս ձեռքը յաւաչ կ'երթար առանկ սոսկա-լի սպրագործուԹեան մը . պատասխանեց ինձ արտասուալից աչքը . « Երանի՛ Թէ իմ մայրս ալ զիս ապաննած ու զիս ազատած ըլլար այս հիմակուան քաշած և քանի որ շունչ ունիմ՝ քաշելիք տանջանքներէս . տէս սա ցառալի վի-ճակիս . մեր այրերը ամէն օր որսի կ'երթան . իսկ մենք պարտաւորած ենք անոնց հետևե-լու զառակ մը գրկերնիս առած և զառակ մ' ալ կռնակնիս շալկած . մեր այրերը երեկոյին դա-տարկ կը վերադառնան . բայց մենք գարձեալ մեր տղայքը շալկած կը դառնանք . և Թեպետ օրն ի բուն շրջելով պտրտտած ու յոգնած ենք . սակայն պէտք է որ գիշերն ալ աշխատինք ա-յնպէս չենենք ու առաւօտեան կերակուր պատ-րաստենք . եԹէ գործը այսչափ ըլլար , գար-ձեալ համբերուԹիւն կ'ունենայինք Թերևս . սակայն սոսկալին ան է որ շատ անգամ կը գի-նամեան և զմեզ կը ծեծեն , ու մազերնիս քա-շելով զմեզ սոնակոխ կ'ընեն . շատ անգամ ալ երբ ուրիշ երիտասարդ կին մ'առնեն , ան ա-տեն վիճակնիս ան չէ սակայն անտանելի կ'ըլ-լայ . քանզի ասիկայ իրաւունք կ'ունենայ զմեզ և մեր տղայքը չարաչար գործածելու :

ԱյեԹէ մարդկային բնուԹիւնը կրնայ սա-կայն այսպիսի անգԹուԹեանց և խոտուԹեանց . ինչ մեծ գուԹ ու համակրուԹիւն կրնանք ցու-ցընել մեր ազգիկ գառակաց . զանոնք այս մեր քաշած գժնդակագոյն բռնաւորուԹիւն-ներէն ու տանջանքներէն ազատելէն զատ ինչ շնորհք կրնանք ընել անոնց : Դարձեալ կ'ըսեմ , երանի՛ Թէ իմ մայրս ալ ծնած առեներս դիս երկրին տակ Թաղէր : » Սիրոյ և Ըներկիկի մէջ հաղարաւոր մայրեր ալ մի և նոյն գանգատնե-րը ուխտ ընելին Թէ որ կարենայինք կերպով մը ականջ դնել անոնց : Այց , սիրելի քոյր Ընդհատումի բաղաքական օրինաց և ան-դի կրծնից համեմատ մարդիկ կրնաջ սեռը ինչ տարբին և խեղճ վիճակի մէջ կը պահեն : Դար-ձեալ նայեցաք Ընկնատանի վրայ , և կը տես-նեմ որ արհամարհանք և կշտամբանք միայն այն տեղի դժբաղդ կիներուն բաժինն եղած են : Խաղաղական ամիսնանոսի շատ մը կղզեաց մէջ գեռ ԲրխատոնէուԹիւնը չմուած , տղայոց երկու երրորդ մասը կ'ըսպանուէին իրենց պղտիկուԹեան առենը : Կոլիտոս երկիրները ծնողք իրենց ձեռքնին աղջիկ զառակին կը ծախեն անոնց գերեզկուԹեան և հատակին համեմատ գանազան գիներով : Ընհատակ քոյր իմ , կանոնց գժբաղդ վիճակը Բրխատնեուա-Թեան լոյսը չտարածուած տգիտաց երկիրնե-րուն մէջ : Տեղ մը կինջ իւր երկան բնակուա-նը մտնելը պղծուԹիւն կը համարեն , փոխա-նակ զանի անոր զարգը կարծելու . ուրիշ տեղ մը բնակուԹեան մէջ կինը չեն ընդունիր , կը մերժեն և իրրև դատապարտեալ կը վարուին հետը . տեղ մը զանի իրրև գերի կամ տնա-տուն կը ծախեն ու կը գնեն . տեղ մը կինն իւր երկանը սեղանին կը ծառայէ առանց անոր ա-զատակից ըլլալու . ուրիշ տեղ մը իւր անգու-ժ լծակցին բնաւներըը իրրև բնաւնակիր գրատ կը կրէ . և երբեմն ալ կը պատահի որ այս տեղերուն մէջ կնոջ արիւնը երկրին խորերէն իւր գժբաղդուԹիւններըը կը գոչէ : Արնաց մէ-կը մեղմ ցուցընել անհատատուԹեան խոս-տովին մէջ Թափառալ այս 600 միլիոն մարդ-կոց երկիրներուն մէկը՝ ուր կինը երկանը ընկեր , երջանիկ ամուսին և յորգելի մայր համարուի : Ընբեմն մրջափ երախտագէտ պիտի ըլլանք մեր ուսերը կրծնից , որ զմեզ կը լատատուրէ . և հե-տևաբար բոլոր ազգաց քաղաքակրԹուԹիւն կ'ազգէ . և հետևաբար մրջափ պարտական ենք այս կրծնից սրբազան կանոնաց համաձայն շարժիլ :

Այնը կատարեալ ազատուԹեան ալ երախտապարտ ըլլալու է . քանզի երկիր մարդկի ինքնակենքնին պաշտպանելու կարողուԹիւն ունին . իսկ կի-նը՝ անկար . կատարեալ ազատուԹենէն պաշտպանու-ԹիւնՀ կ'ընդունի : Ինչ կերպով ուրեմն իւր երախտագիտուԹիւնը պիտի յայտնէ : Այ-նը հանգարտուԹեամբ և անկն կերպով իւր հայրենասիրուԹիւնը ի գործ գնելու միակ մի-ջոց ընդունելով պէտք է ձգտի Թէ խօսքով և Թէ գործով մանկան սրտին մէջ անկեղծու-ԹիւնՀ և խոհեմուԹիւնՀ տպատարել , որոնցմով տղերքը կը փառատուրուին . այս պարտուց կա-տարմանը համար միայն կինն ունի կատարեալ յորմարուԹիւնՀ . որովհետև բնուԹիւնը տղա-յոց փոքրիկ հատակը մօրը ձեռքը յանձնած է և ամէնէն առելի առաջ զանոնք սիրելու ազ-դակ առած է տղայոց : Այրը կարող է նաև տղայոց մխուԹիւնները , շարժմունքները և վա-վաքները որոշել և իւր նպատակին համա-ձայն անոնց սրտերը կրԹել . և այս բոլոր պարտքերը կատարել տալու համար բնուԹիւ-նը մօրը՝ ծանրագին սրտեսիրուԹիւնը տուած ,

որով կը քաջալերի իւր զաւակը կրթելու պատմութեան մէջ եղած վառ առարկաներուն հետևելով։

Հեղինէ մեծն Կոստանդիանոսի մայրը՝ մայրական արժանաւոր կերպով մայրական ազգեցութեան օրինակ կրնանք համարիլ. ասիկա Ինքնանիայ մէջ (Ի Փռիգիա Ասիա) հեթանոս ծնողքէ մէկ ծնաւ, կ՚ըսուի, և Ինքնիական գաւառացի ինքնակալ Կլորս Կոստանդիանոսի հետ ամուսնացաւ, որուն ազնուութիւնը, ժուժկալութիւնը, բարեպաշտութիւնը ամենուն յայտնի էր։ Թէև Հեղինէի ժամանակը ամուսնութիւն իւր յարգը կորսուած էր, և արհամարհանօք կը դիտէին զայն, բայց ինքը Հեղինէ ինքզինք ամանն և բանաստիրական զգացմանց տուաւ բոլորովին. քանի մը գիրքեր շատրակեց, որոնցմէ էր նաև Հելենեներէն ուսնուցուր գիրք մը։ Սուր որդին Կոստանդիանոս առաջնորդի տարեկան էր, երբ առաքինին Հեղինէ տեսնելով որ իւր էրիկը Մաքսիմիլիանոս դառնը հետ կարգուիլ կուզէր, բոլորովին ինքզինք բաժնուեցաւ և այս անցատուութեան առ անարգանաց վերհանձնաբար համբերեց. իսկ երբ իւր որդին գահակալեց, ինքն ալ առջի ատոհմանին հասաւ և ալ աւելի առաքինութեամբ և քրիստոնէական գործերով պարգարեց իւր ատհմանը։ Ով կրնայ երևակայել ճշդիւ, թէ ինչ մեծ ազդեցութիւն ունեցած է Հեղինէի դաստիարակութիւնը, օրինակն և ընթացքը առաջին քրիստոնեայ ինքնակալին ապագային վրայ. ասիկա միայն այն բարձր ինքնակալին պատմութեան մէջ նայելա է։ Աւգոստիկոս Ը. ին մայրը գեշ և բոլորովին բնութեան հակառակ կարծիքը որ պնդուական բառերու մէջ կայ, ամենևին քանի տեղ չդնելով, իւր մանկիկը գաստիարակեց, և իրեն մեծ պատրաստութիւն և զգօնութիւն հմտարերց բնութեան մարդ նախատատհմանած բարձրագոյն պաշտօնը կատարելը։ Աւգոստիկոս օրէցօր կը մեծնար օր ըստ օրէ, ոչինչ ալ մայրը առաքինութեան և առաքինութեան սէրը կ՚արծարծէր անոր սրտին մէջ՝ և անդադար անոր ականջին կը յիշեցնէր. «Որդիս, աւելի կը փափաքիմ որ քեզի գահին և մինչև անգամ կեանքէ զրկուած տեսնեմ քանզի մեղքով մը հոգիդ կորսուած ը»։

Յրանչիսկոս Պապն հռչակաւոր փիլիսոփային մայրը Ընտա տատուածպաշտութեան և քրիստոսութեան նկատմամբ ունեցած ծաղրութեանց համար մեծ համբաւ ունէր. ասիկա Թղթակցութիւն կ՚ընէր Հելենեներէն Յաբիլ եպիսկոպոսին հետ և տասը ջատագովութիւնը (Ներբողները) Ատիներէն, Յաճախէն այնչափ գեղեցիկ կերպով Թարգմանեց որ ոչ հեղինակն և ոչ իսկ Նարքեր եպիսկոպոսը կրցան քան մը յաւելուլ կամ փոխել։ Ինձա Թարգմանեց Թոմքանեներենէ Օհիոս Ինտեարոսն՝ Ճակատագրին և ինքնասիրութեան վրայ յօրինած ճառերը. իր ինչ բարձր կարողութեանց և ստղանդի տէր ըլլալն ապացոյց կրնն երկու զաւակացը հասմար տարած խնամքներն կրնան ըլլալ. երկու զաւակներ, Ինոճենիոս և Ֆրանչիսկոս, որոնք այն դարուն ամենէն տեղի հռչակաւոր և երևելի անձերն եղած են։

Բայց դարձեալ պէտք է գիտնանք որ աստղաբնութիւնը և բարեպաշտութիւնը բաղմագիտութենէն տեղի մայրական ազդեցութեանը կ՚ելնէ և անոր գլխաւոր հիմն է։

Սերը Աստց մէջ կը կարգանք որ Սամուել մարգարէն դեռ մանուկ, իր մայրը զինքն Աստուծոյ ընծայեց։ Նաև Տիմոթէոս, Պօղոսի օգնականն ալ պղտիկուց Ս. գիրքը ուսուցուր իր բարեպաշտ մօրմէն։

Աւստի, սիրելի քոյր իմ, այսպիսի օրինակները չհետևիլ և աչքերնուս առջին առնելով, խնդրենք ամենակալ Աստուծմէն որ զօրացնէ զմեզ և մեր բազմահները մեր ամէն պարագաներ կատարելու, և անատակոյս ըլլանք որ մանուկներն հարիւրապատիկ պտուղներ տիսան քաղենք։

Ուղղ ըեր.

Պար քո

* * *

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ,

ԸՍՓՈՓԱԿՈՒՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ԱԶԳՑՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

(Հրատարակեալ 40 Ամէն.)

Գ. ԴԱՍԱՏՈՒԹԻՒՆ

55. Ազգային ժողովարանի մէջ դատաստանական յանձն առնող վարժապետ մը՝ հպատակութեան հետ ունենայ այսմանին համեմատ իր պաշտօնը անխափան և անմեղ պիտի հատուցէ։ արդիւնաբեր աշխատասիրութեամբ։

54. Դատաստան ըլլալու անձը արգէն իր աշակերտութեան միջոցին որ կարգապետանոց ընթացքը լատուցած ըլլալու է, և որ ձիւղին մէջ աւելի յաջողակ գտնուելուն համար վկայական ստացած ըլլալու է Ռուսաստանեան խորհրդին. և մեմ՝ ոչ պակաս է որ բաւական ժամանակ գատաստանի օգնականութեան բաժն ըլլայ ազգային վարժարանի մէջ։

(Այս կանոնը չվերաբերիր անոնց, որ արդէն վարժապետ

ձանձրացած, և այս պաշտօնը ըստ արժանւոյն վարած են Ազգին մէջ)։

53. Դատաւորները իրենց որոշեալ ժամէն գոնէ քառորդ մ՚առաջ պիտի գտնուին ի վարժարան. և ուղղակի կառավարչին երթալով, օրագրութեան տետրը ի՚առնեն անկէ, և կամ իրենց դասարանը կամ ուրիշ յատկացեալ անկեակ մը կ՚երթան հանդչելու։

56. Դատաւորն դաս տալու առեն բնաւ ուրիշ գործ ընդունիլ պիտի չունենայ. դատաւորութեան պարտականը միշտը արշալոյ կերպով կը բաժնէ. մէկ մասը օրական քննութեան՝ նախընթաց դասը հարցնելու համար, միւս մասը՝ նոր դասն ուսանելու յատկացնելով։

Նախընթաց դասու վրայ հարցումները վերջանալու ի՚ըլլան, և հարցուած աշակերտին կարողութեան տասիճանը կը նշանակուի օրագրութեան մէջ յատուկ նիշերով։

Դատավորութիւնն առանձին պարտաւորած և տեսնուած տգրուած պիտի ըլլայ որոշուած դատապրքերուն համեմատ, և ըստ այնմ պիտի աւանդուի աշակերտին։

57. Օրագրութեան մէջ դասատուին գործածելիք նիշերը պիտի ըլլան հետեւեալ թուանշանները, որոնց կարողութիւնն ալ դիմացը գրուած է։

0 անպիտան։

1 2 3 } տկարագոյն

4 5 6 } տկար

7 8 9 } միջակ

10 11 12 } լաւ

13 14 15 } լաւագոյն

16 17 18 } գերազանց

19 20 } յոյժ գերազանց (պահելի նիշեր)։

Բացակայ եղող աշակերտաց նիշին տեղ։

58. Գիր և թուանշան ճանչնալէ և գրել տալէ և ընթերցանութեան համարէն զատ, որ խրթնագոյժ եղանակաւ պիտի ըլլան, միւս դասերը Հանրակրթական ուսմանց դասախօսութիւնը խրթնագոյժ եղանակի մեջ ընելու ջանքով։

59. Դասն աւարտելու համար որոշուած ժամուն դասախօսութիւնը կը գադարի. և դասատուն նոր աւանդած դասուն համառօտագրութիւնը ի՚արձանագրէ իր օրագրութեանը մէջ. և ի՚ըստորագրէ։ Յետոյ գնդե գրատետր մը պիտի ստանայ, ուր եղած աշակերտներէն մէկը նոր աւանդած դասուն վրայ հարցում ի՚ընելու պէտք ունենայ, կարող ըլլայ հարցընելու։

Այս գրատետր մը միջոցին եղած, ի՚արձակէ աշակերտներն ի սերտարան. և ինք օրագրութիւնը յանձնելով կառավարչին կը մեկնի, թէ ար այցելու է. իսկ թէ ար միշտ կենալու պայման ունի, իր անհատկը ի՚առանձնանայ։

40. Դասատուութեան միջոցի, միայն դասատուն և իր դասուան կարգը ներկայ պիտի գտնուին դասարանին մէջ։ Ընտանեական խորհրդոյ անդամներէն և Հոգաբարձութենէն կամ ասոնց կողմանէ եկող անձինք և Տեսուչը կրնան ներկայ ըլլալ դասուն՝ կատարեալ լուութեամբ։

Ի ներկայութեան աշակերտաց հրահանգ չտրուիր ոչ դասատուի և ոչ կառավարչի։

41. Ընտանեական խորհրդոյ անդամներէն կամ Հոգաբարձութենէն եթէ ուզող ըլլայ ար և իցէ կարգի մը ուսուցման վերաբերեալ հասկնալ և քննել, յատուկ ժամանակի մը մէջ ի՚առաջնորդութիւն կառավարչին՝ կարգն ի դասարան հանելու, և Տեսուչին հանելու կամ դասատուի մը ներկայութիւնը պէտք եղած քննութիւնը կ՚ընեն։

42. Վարժապետ մը երբ բանաւոր պատճառով պարտաւորի իր պաշտօնին ներկայ չգտնուելու, գրով պէտք է որ յայտնէ Հոգաբարձութեան։

Առանց բանաւոր պատճառի՝ բացակայ գտնուող վարժապետ մը ազգարարութիւն կ՚ընդունի Հոգաբարձութենէն ըստ 26դ յօդուածոյ Բարեկարգութեան Կանոնագրութեանն։

43. Վարժապետ մը երբ իր պաշտօնէն հրաժարելու դիտաւորութիւն ունենայ, գոնէ ամիս մ՚առաջ գրով իմաց պիտի տայ Հոգաբարձութեան, պատճառն ալ ի միասին յայտնելով։

Վարժապետ մը երբ այն կանոնը չպահէ, տուգանքի մը կը տուժէ։

44. Հոգաբարձութիւնը ըստ պատշաճի պէտք է որ ուսումնց ընթացքը լացառնող և ընտանեական խորհրդէ վկայական առնող, կամ գեռ ուսարանելու վրայ եղող և յատկապուր ուշադրութեան դասատուի օգնականն դնէ արժան ուսուցանելով։

Դ. ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԻՒՆ

45. Ազգային վարժարանի մէջ կառավարչութիւն յանձն առնող վարժապետ մը՝ Հոգաբարձութեան հետ ունեցած պայմանին համեմատ իր պաշտօնը անխոտան և անմեղ պիտի կատարէ աշխարհիկ հսկողութեամբ։

46. Կառավարիչը պիտի ունենայ օրագրութեան տետր մը, որուն մէջ ամէն օր պիտի նշանակէ վարժարանէն բացակայ գտնուող աշակերտները. նոյնպէս և հրաժարուող աշակերտները. յանցաւոր գտնուած և պատժուած աշակերտները. յանցաւորի՝ և պատժուելու հետեւանքը Տեսուչին կամ Հոգաբարձութեան ներկայացնելու աշակերտները. որուն ալ ժամուն ներկայ եղող կամ չեղող դասատուները. ազգային պաշտօնական անձերու այցելութիւնները. և վերջապէս վարժարանին մէջ անցած և նշանակութեան արժանի համարուած դէպքերը. Տեսուչին խորհրդով։

47. Ամէն առաւօտ Ս. Եկեղեցւոյ ժամերգութենէն առքը (եթէ վարժարանը Ս. Եկեղեցւոյն մօտ է), կառավարիչը աշակերտները ի՚առաջնորդէ ի վարժարան. հան բացակայ աշակերտները օրագրութեան մէջ կը նշանակէ. ներկայ եղողներուն մարմնոյ և զգեստուց մաքրութիւնը, և գրքի ու գործիքի համբողջութիւնը հարցնելէ ընելէն յետոյ՝ սահմանեալ ալրօթքն ըսել կտուայ. և ապա ժամանակացոյցին համեմատ կը վարտի։

48. Աշակերտ մը երբ բացակայ գտնուելու պարտաւորի, անոր ծնողքը կամ անձամբ գալով կամ գրով իմաց պիտի տան կառավարչին։

49. Կարգ մը ի դասարան հանելու համար մեծ զանգակի ձայնով նշան կուտայ կառավարիչը. նոյնպէս նշան կուտայ երբ դասատուխեան ժամամտկը աւարտած կարգն ի սերտարան հրաւիրել պէտք ըլլայ։

50. Սերտարանին մէջ կառավարիչը լուրջ դիտողութեամբ պիտի հսկէ աշակերտաց վարուց և աշխատասիրութեան վրայ, առեղ առեղ շրջագայելով սերտարանին մէջ։

Զբօսանքի կամ հանգստեան առեն ալ կառավարիչն անձամբ պիտի հսկէ աշակերտներուը։

51. Կառավարիչն իրեն օգնական կամ փոխանորդ մը ի հարկէ պիտի ունենայ կամ աշաօրեայ դասատուներէն կամ հասարակաց աշակերտներէն ըստ որշման Հոգաբարձութեան. որպեսզի որշակի ժամու մէջ կամ ի հարկին՝ պաշտօնին հագը անար յանձնելով, ինքը հանգչի կամ ճաշ ընէ։

52. Բարեկարգութեան գէմ գործող, նոյնպէս կրօնական, ազգային և ընկերական պարտաւոր անհոգ կեցող աշակերտները կառավարիչը կը խրատէ ու կը յանդիմանէ և կը պատժէ ըստ կանոնի, օրագրութեան մէջ ալ արձանագրելով։

Դարձեալ միևնոյն յանցանքը գործող աշակերտը օրագրութեան մէջ ի՚անցընէ, Տեսուչին ներկայացնելու համար։

Երբ աշակերտ մը Տեսուչին խրատոյց յանդիմանութեանց

և պատժոյն ալ անոսոսկ, նորէն կը նշանակուի օրագրութեան մէջ Հոգեպարծանութեան ներկայացնելու համար։

Երբ աշակերտ մը վերջապէս չհրաժարի և չդադարեցնէ, Հոգեպարծանութեան պաշտամունքը կ՚արտաքսի վարժարանէն։ Պատահած այնպիսի աշակերտ մը չար օրինակ չըլլայ իր ընկերներուն։

53. Կիրակի ճաշէն ժամ մ՚առաջ երբոր պառաւուհիները կը դադրին. և Տէրունական համբարձման կամ յղութեան օրերուն վերարերեալ խրատները կուտայ։

Այս միջոցին Տէրունչը աչքի կ՚անցնէ պառաւուհիներուն և անոնց մէջ չանցաւոր գործածած աշակերտները կը պատժէ, և առանձին գովութեան արժանաւորներն ալ կը գովէ և կը խրախուսէ պատուոյ և պատժոյ կանոնին համաձայն։ Մշտօրեայ պառաւուհիներն ալ կրնան այս միջոցին իրենց անհրաժեշտ ներկայ ըլլալ տրտրարանին մէջ, առանց պատճառանք ի՚ պղտիկներ համար։

54. Տարւոյն հինգ տաղտաւրներուն, մանաւանդ Ս. Յարութեան և Վերափոխման տաղտաւրներուն, կառավարիչը պաշտօնապէս մը մէջ աշակերտներուն Ս. Եկեղեցի կ՚երթայ ի խոստովանութիւն և յետոյ ի մատնակցութիւն Ս. Հաղորդութեան խոստովանահօր պարագլխութեամբ։

Խոստովանութեան օրէն մինչև Ս. Հաղորդութիւն առնելու օրը, աշակերտներուն հագուստ պատրաստելութեանց հետևելու են. և նոյն օրերը թէ խոստովանահօրմէն թէ գրիչտատնէական պատասխան, և թէ տիրուհիներն ու կառավարչուհին իրենց բանակներ ու յարգութիւնք առնելու պիտի աւանդուին։

ՀԱՆԴԷՍ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Ի ԳԱԼԱԹԻԱ

Գալաթիոյ Ընծայարկեալ վարժարանը անցեալ հինգշաբթի փառաւոր հանդիսիւ, յետ աւարտման Ս. Եկեղեցւոյ, կատարեց Սրբոց Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրոպայ տօնախմբութեան հանդէսը, որուն մանրամասն նկարագիրն ընել զանց կ՚ընենք, մեր ընթերցողաց ձանձրութիւն չտալու համար։

Այս երրորդ տարեդարձն է որ ի պատիւ Սրբոց Թարգմանչաց կը կատարէ յիշեալ վարժարանը, մանաւանդ նպատակաւ մը, զոր թէ և անցեալ տարուան Յունուարի 14[ի] թուոյն մէջ բացատրած ենք, սակայն այս տարի ևս համառօտիւ մը նոյն յիշատակութիւնն ընել կ՚ուզենք։

Ազգն իր անցելոյն մէջ երանաշնորհ հայրեր, և հայրենասէն քաջեր ունեցած է, որոնց յիշատակը Հայաստանեայց Ս. Եկեղեցին ջերմեռանդութեամբ կը տօնախմբէ ամէն տարի։ Ազգն իր վերջին տարիներս ալ ունեցած է իրեն նուիրեալ ընտիր անձեր, և անոնց կարգին մէջ առաջին տեղը բռնած են Ազգային ուսումնական յառաջադիմութեանը նուիրեալ անձերը, որոնք երբ մեկ կողմէն Ազգին մանկտւնքը ըստ բերման ժամանակին դաստիարակելու և խնամելու մտադիր էին, միւս կողմէն ալ տաստիկ նախատինք ու հալածանք և տառապանք կրելու ենթարկուած էին, անանկ որ մեր յիշատակած անձանց զրեթէ ամէնքն ալ իրենց կեանքը դառնութեամբ անցուցած և այնպէս ալ կնքած են։ Ազգը թէ որ չունի իրեն նուիրեալ անձանց յիշատակը պատուելու ու մեծարելու ուրիշ միջոցներ, գէթ կրնայ ունենալ անշուշտ տարւոյն մէջ օր մը, որ անոնց յիշատակին նուիրէ, և գէթ անոնց անուան յիշատակը պատուէ։ Ահա այս մտօք Գալաթիոյ վարժարանը երեք տարիէ ի վեր հանդէս կը կատարէ, և ըստ առիթու թեան առենախօսութիւն ներն ըլլալէն յետոյ, ազգային երախտաւոր անձանց յիշատակութիւնը կընէ[1], որոնք են Միսիթար Աբբայ Սեբաստացի, որուն Ս. Էջ պրածին, որ Լառնո- վանքն իր ոսոխներն առնելով, Կ. Պոլիս եկեր ոսոխներ ծաղկեցնելու համար և չէ յաջողեր։

Կոլատ Յովհաննէս պատրիարք Կ. Պոլսոյ, պարբերական ոսոխարանի հիմնադիր։

Ղուկաս վարդապետ Խարբերդցի, Պարբերականաց ոսոխարանի վարժապետ, և Լպին գրոց թարգման։

Յակոբ Նալեան Պատրիարք Կ. Պոլսոյ, բազմահրմոպ մատենագիր։

Շնորհք Ակրոթէլ ամիրայ, պղտին դպրոցին հիմնադիր։

Պաղտասար պատուելի Կեսարացի, վարժապետ և մատենագիր։

Ըսկն վարժապետ, Թոռն Պաղտասար Պատուելոյ, վարժապետ և մատենագիր։

Սարկաւագ Պօղոս պատուելի Տիվրիկցի, վարժապետ Պարբերականաց ոսոխարանի և մատենագիր։

Սարկաւագ Թէոդորոս, վարժապետ։

Տիրացու Յարութիւն Կարնեցի, վարժապետ։

Սարկաւագ Յովհաննէս Ներիացի, վարժապետ և մատենագիր։

Դէորգ պատուելի Տէր Յովհաննէսեան Պալատցի, լեզուագէտ և բազմաշխատ մատենագիր։

Տիրացու Խաչատուր Սամաթիացի, վարժապետ։

Թոփալեան վարժապետ։

Տիրացու Գալուստ Իւսկիւտարցի, վարժապետ։

Տիրացու Մեսրոպ Լանկացի, վարժապետ։

Տէր Մեսրոպ քահանայ, վարժապետ և մատենագիր։

Սարկաւագ Պօղոս Խասգիւղցի, վարժապետ եկեղեցական երաժշտութեան։

Տէր Յովհան Վանանդեցի, վարժապետ Օգիոնոյ և բանասիրեալ։

Սարկաւագ Յովհաննէս Տէր Աբրահամեան։ վարժապետ և առաջին հրատարակիչ տարեցոյցին Պրուսայու։

---

[1] Անցեալ տարի Ժամանակ հանդիսին Վերջ։ Թեև այս հանդէսը նկարագրած և երախտաւոր անձանց անուանները տրբատարակած էինք, խնդրելով որ մեզ ևս ժամանակ կամ մեր չգիտցածները կանենք մեզի ծանուցանեն։ այս տարի բազմաթիւ տեղեկութիւններ հմուտ անձերէ քաղելով ուզեցինք ազգային ուսումնական յառաջդիմութեան ձեռնտու երախտաւորները ևս ծանոյ ցանկը, որ վերջը հրատարակած ենք Ժամանակագրութեան կարգաւ։

Յարութիւն ամիրայ Պէզճեան, դպրոցական յառաջադիմութեան առաջին յետնորդ և օրինակ.
Դերդար պատուելի Փէշտըմալճեան, վարժապետ և տպեղնագիր.
Խնամակերտի վարժապետ.
Տիրացու Համբարձում Պապա, հեղինակ հայերէն գրաբար երգարանի.
Ոնդրանիկ Սամանթիայի Հիլման, վարժապետ.
Տէր Միքայէլ Սամանթիայ, վարժապետ.
Մուրբէն Ընդրեաս Փափազեան Խոտգիւղցի, քէշիշ-ագիւղ և վարժապետ ծաղիկ-յիւղ-տղոցն Օմրանոյ.
Տէր Մարգար Վանանդեցի, վարժապետ.
Մուրատ Ներիայի, վարժապետ Ռոտոշտարանին Էրմաղ.
Յովհաննէս Շահինեան Վանցի, վարժապետ Օմրանոյ.
Պօղոս Յիսկիա Բըզքաղաճցի, վարժապետ և տպեղնագիր.
Գէորգ Պատուելի Չաիրատճեան, վարժապետ.
Խաչատուր Պարտիզպանեան Իսկիւտարցի, վարժապետ Իպալիան ընտանեաց ի Պոլիս ոտոշտարանի և չանախգիւղ.
Նիկողոս Օ. Օթյանեան, տպեղնագիր.
Խաչատուր Աբովեան Ռուսաստանցի, տպեղնագիր:
Մեսրոպ Թադիադեանց Ջնգիսատանցի, տպեղնագիր:
Նիկողոս Ադամեան; գրագիր.
Յովհաննէս Ոսկեան Սերվերեան Ընդունի Հարտարապետ. աղգային գիրքերոցի վարժարանի, այն է՝ Ալեմդարի առաջին հիմնադիր:

Կը փափաքինք որ այս ցանկին դարձ մնացած կան նէ, մեզի ծանուցանեն. կը փափաքինք նաև որ միևնոյն հանդէսը ամէն ամսոյ մէջ տարի:

ԱՂՑԵԼՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ Ի ՎԱՐԺԱՐԱՆ ԴԱՒԱԹԻՑ

Ընդհանուր կիրակի, ուր գլուխ պատուական նշխարաց Ս. Լուսաւորչին մերոյ՝ Գրիգոր Ս. Լուսաւորչէ Արեղեցւոյ ուսմանմբռնութեան օրն ըլլալով, Ամենապատիւ Պատրիարք Հայրը Ս. Պատարագ մատոյց Հիշեալ Արեղեցւոյն մէջ: Յետ կիսատուր Նորին Սրբութենութիւնը բնակերութեամբ խրմեան Դէր. Հօր և այլոց եկեղեցականաց Պատգիայ վարժարանին այցելութիւն մ՚ըրաւ, ուր ինչպէս ջոյս տարիէ ի վեր ամէն կիրակի, դասախոսութիւն կ՚ըլլար բեռնակիր Հայաստանցի եղբարց՝ Ընձեռնաւէր ընկերութեան միջոցաւ: Սրբազան Հայրը անձամբ քննեց բեռնակիր աշակերտաց վերուծութիւնը, տեսաւ անոնց թուանականն և աշխարհագրական հմտութիւնը, ըստ բեռնակրին մէկուն պատրաստած տետնախօսութիւնը, և խիստ ուրախացաւ. ու գովեց ոչ խրախուսեց անոնց Ընձեռնաւէր դաստուն Անձատատիս Բրխտատուսը տալ Պատարաեանը, որ ամէն ջոյս տարիէ ի վեր անընդհատ ամէն կիրակի, առատ և ձմեռ, Իսկիւտարէն կուգայ և իր գասատուութեան պաշտօնը կը վարէ. քաջալերեց նաև աշակերտաց խումբը, ու անոնց բարի եռանդը, որ իրենց առօրեայ տարժանեաց աշխատութեանց վրայ կիրակի օրերու հանդիսան ալ մատուր մշակութեան կը զոհեն. և յայտնի խոստովանեցաւ թէ յիրաւի ինչ լսած էր Ընձեռնաւէր ընկերութեան միջոցաւ բեռնակիրներու ուսմանը ղեկավելը. բայց չէր յուսար թէ այսչափ յառաջադիմութիւն իսկ ըլլան:

Սրբազան Հօր խրախոյսը և հայրական օրհնութիւնը ղօրացուցին և միսիթարեցին այն Հայաստանի բեռնակիր ջերմեռանդ եղբայրները. իսկ մենք որ ներկայ կը գտնուէինք այս հանդիսին, Սրբազան Հօր խօսքերուն վրայ ինքնիրենուս կը մտածէինք, Թէ ինչ բան որ Սրբազան Հայրը չէր յուսար տեսաւ և միսիթարուեցաւ. տակաւին ուրիշ շատ բաներ կան, որոնք մեր Գօլեջի ազգայիններէն չէն յուսար մեր դրսեցի եղբայրներէն, բայց օր մը պիտի տեսնենք, ու հաւատան . . . . . ;

Հետևեալ օրը Սրբազան Հայրը գացեալ այցելութիւն ընտ Պատրիարքական Վարժարանին, և սանդուխա մանկանց ուսումնական վիճակին տեղեկութիւն ուզեց: Յառաջադէմ աշակերտաց գրութիւններն աչքէ անցուց, և ուրախութեան գասատուներէ ըլլալը լսելով, ուրախութիւնը կրկնապատկուեցաւ, և Պատրիարքական վարժարանը Թէ հաստատուն և Թէ արդի սանդուխաններու յատկացած ըլլալը տեսնելով, և Թուականի խորհրդոյն ալ վարժապետաց և աշակերտաց միսիթարիչ ջանքը նշմարելով, օրհնեց զամէնքը և իրախուսեց իրենց այս ընթացքը յառաջանելու, ժամուցանելով Թէ արդէն Պատրիարքական վարժարանին այս դիրքը ու յարմարութիւնը նկատուած ըլլալով Պատրիարքական կոմմանէ ալ Գասատուական Եկեղեցական Պատրիարք մ՚ընտրելու որոշում եղած է, բոլորովին սանդուխա սպասող յառկացեալ: Հայտնեցին նաև ուսումնական գործակցել:

Սրբազան Հօր քերդեն այս իրախուսական խօսքերը և Ընտ օրհնութիւնը լսելով, ուսուցչապետ ամէն ներկայ գտնուողները մխիթարուեցան. և յառաջադէմ աշակերտ մը Ղեմեան Մուրատեան Վանցի Սրբազան Հօր մատուցաւ ուշադրութիւնը և օրհնութիւնը ստանալու, յետ մեկնելոյ Նորին Սրբազնութեան պատրաստեց հետևեալ Ընդերձը, զոր Թերթիս միջոցաւ կը նուիրէ ուս Նորին Սրբազնութիւնն, յուսալով որ ընդունելութեան բարձր ընտրելին կ՚արժանանայ, և բանասիրդ

ծոյան արուեստին մէջ իր ալեծեցած թեւերուն ներոլամիտ աչքը կը նայի։

ԱՅԻ ՆՈՐԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՍԲԲԱ ՉՆՈՒԹԻՒՆՆ

ՆՈՒԵՐ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ

Որ ի հոգս յարածուփ սիրեցելոյ քոյին հօտի
Ընդեալ զաւուրըք բազմերամ՝ եկեր Հայոց ի բաղդին կատս,
Պատուական Աւետարանդ ըզտարագիր որ դիս նորին,
Ի պանդուխտ հովուելով վայրս, Աթթոն Դիւտասեռս,
Ե իբր սակի Ջրովս հալոցոց յաղէտս Հայոց կրծեալ զհանճարդ,
Որդ յաղնե եղեամ՝ մանկուանս բազմեալ իբր հայր որդեդրով
Զայնես «մանկունք, առ ի գիւտ կարսաւելոյ բաղդին Հայկայ»
«Ի սասեղեանճան գարուց ի ծոց կամ յաւետ բակս Հայրենեաց՝»
«Ի ձեզ վառել ղջահ խնառոից ի կանթեղէ Սեզանոյն։»
Օմայլեալ ընդ բանդ գերաշխարհիկ մատեանդ ի համբոյր գարշապարացդ . . .
Տեսեր զքնարս անձարսար, տնգեալ ղլարս քոյին մատամբ
Կին արկեր քաղցր ձայս ի ժպիտ «որդեակ շատ են ազէտք մեր»
«Պինդ կալ զքնարդ և երգեա ցորչափ կայցեն շունչ ի անգուանդ»
«Ընդն և սէր Աղուէսեան ազգել ի սիրտ Հայաոտանեաց։»

—Ընդ իմ ազեւորեալ ի հայրական յորդորանացդ Ընդանց խոկ կշռելոյ զկատարեալն իմ ի քնար Ոգդօնան ձեռօք մատիմ ի ցանկալին իմ ի քնար Ոճզ ըզայն մատդիւր նուիրելով, Հայր Պատուական։

ԵԳԻԱԶԱՐ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԱՊԵՏ

Իմիրի Ընդլ» պատուական օրագրոյն 731 մուտն մէջ կը կարդանք հետեւեալը։

«Սուրբ Երուսաղէմէն յունիսի 16 տմուռ թուով հետեւեալ եղերական լուրը կը ծանուցանէ մեզ որ հետաքրքրական և մխիթարական ուշադրութեան արժանի է։

«Ընծայ 4ին յունիսի օր անուոր ատրոզութիւն մը տեղի ունեցաւ Ս. Յարութեան աշխարհամատարած տաճարին մէջ, որուն նմանը տգիտին պատմութեանց մէջ գեռ կարգացուած չէ։ Հայոց եկեղեցին կրնայ պարծիլ իբր ընդհանրական տաճարին վերայ։ Ցաջին անգամն է որ խառն ազգերէ ու կռնքներէ բաղկացեալ խուռն մի Հայ եկեղեցւոյ օրհնութիւնը կ'ընդունի ի նպատակ իւր հոգւոյ փրկութեանը և ի յաջողութիւն իւր աշխարհային ձեռնարկութեանց։ Գանք պատմութեանը։ Հինսիոյին Վերկիայի հոգ

ատրակատեսութեան մեծ Ֆրեկաթը Գօնսթանդին անուն Յոպպէի նաւահանգիստը հասնելով ամբոխ ակիզնեղը, երկրորդ նաւապետը 40ի չափ պատուաւոր ու պաշտօնատար ազգայներով քաղաքս այցելութեան եկան. բոլոր ուխտաւորք և Ս. Յակոբայ եկեղեցին ամենայն ջերմեռանդութեամբ իրենց հոգեւոր այցելութիւնը լուին, և շաբաթ օր Ս. Յարութեան տաճարը փրկական գերեզմանին գնացին յատուկ ուխտ. ուր եռանդագին ազօթքներ ընելով, խնդրանքնիրը տուրք և ուրիշ զանազան բարեպաշտական նիւթեր ալ ծախսուած էին. Ս. գերեզմանին վրայ դրին, և Յատուծոյ պաշտպանութիւնը մաղթելէ յետոյ, տեղւոյս Վերկիայի հիւպատոսքանդիլներ Աբրահամեան արդ Պ. Պազարեանին, որ հետերնին ընկերացած էր, աղաչեցին որ Հայ քահանայ մի գայ և օրհնէ թէ դիւրինք և լմէ իրենց տուրը։ Ուստի ըստ ջերմ փափագանաց իրենց՝ գերեզմանի դրան առջեւ ամենքը մէկէն ծնկան վրայ եկած գլխիկայ, և Հայ վարդապետի մը դիմաց խոնարհելով, կարգայ անոնց գլուխն Ս. Ընծառանը և իրենց անձանց և բոլոր Հայրենակցաց համար Ցատուածայնն օրհնութիւնը մաղթեցավ և Սուրբ Խաչին պահպանիչ պիրենք կընքելով արձակեց։ Այս օրհնութիւնս ընդունելէն առաջ Իշխանք Հայկազուն քանչելիներէն հարցուցած էին թէ Հայոց եկեղեցականաց ձեռնադրութիւնը որպէ՞ս է. և խնամալով առաքելական ըլլալը, և ուրիշ քանի մի հարկաւոր տեղեկութիւններ ընդունելէն յետոյ, իրենց վերջ խոնարհած Հայ վարդապետին օծեալ Ընձան ներքև օրհնութիւնն առին։

Յիշեալ խուռմին մէջ կային քանի մի ազգքաղաքականք, պատգամք, երկու խաչերկ և մէկ հրեայ, որ գիտը ըստ սուրբ գրոց կ'անուանէք։ Երբ լսեցին թէ ամէն օր սուրբ պատարագ կը մատուցանի Վերեզմանին վերայ Հայ կարգաւորաց ձեռօք, փափաք յայտնեցին իրենց անունն ալ յիշատակուելու. և երբ իսաք պատեցաւ իրենց՝ հետեւեալ առաւօտու պատարագիս միջոցին յիշատակելու իրենց բարեպաշտ խուռմը, սկսան ներքին ուրախութիւնն յայտնել ամենախտարհ ծնրադրութեամբ։ Կը խոստովանէին անկեղծաբար թէ եռամեայ պատերազմն սկսելէն իվեր ըստ բոլոր յաղթութիւնին չէ թէ իրենց սուրբ բուն՝ այլ Բրիտանիոյ ամենայաղթ զօրութեանը կուտան. և կը յուսային որ այսուհետև սակի զօրուստ պիտի ըլլան սուրբ Վերեզմանին օրհնութիւնը Հայ եկեղեցականի մի ձեռօք ընդունելով. եղեալ ըստ հաւատոյն։ Երթալու ժամանակ չուռացան Բրիտանիոյ գանձանակին մէջ ձգել այլ հինգ փաթրիկ ըստ մայն իւրք մտածին։

Սուրբ Յակոբայ վանքը եկած օրերնին արժանապատիւ և ազգածանօթ ըստանինոր Հայոց վարդապետին քով գալով խիստ մեծ վա

միագանօք ծախու առնին քանի մի սրբազան տեղեաց ըստ անկար պատկերները. զոր իբրև ճշմարիտ մասունք, մանաւանդ թէ եկեղեցական մի աշխատութիւնները ըլլալուն. ջերմեռանդ սրտիւ ընդունելին: Իրենց կրօնական գաղափարները բոլորովին քրիստոնէական ճշմարտութիւններ կը պարունակէին. անխառն որ և է կրօնի, որպես թերող կիրքերէ բոլորովին հակառակ այն մխիթարներուն որ Աբրեւելք եկած իրենց բուն եկեղեցւոյ ղեկավանցը ներհակ մկրտեալները ի գործ կը դնեն, ի գայթակղութիւն արևելեան եկեղեցւոյ:

Քաղաքական ժողովս Ամենապետ Աճոտ շուք Ալանեան Սահմեան պէտք հետևեալ հրամարագիրը մատոյց Սրբազան Պատրիարք Հօր անցեալ շաբթու:

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Ազգային Քաղաքական ժողովն իր պաշտօնը ըստ օրինի կատարելու համար ամբողջութեան կարօտ ըլլալը գիտնալով, և լսելով միանգամայն որ Ազգին օգտին նախանձախնդիր խումբ մը պատրաստականութիւն ունի այն ժողովը վերակազմելու, բայց ոչ մեզի հետ, պարտ անձին կը համարիմ յանուն Հասարակաց բարւոյն հրաժարիլ ժողովականութեանս պաշտօնէն, արժանաւորաց տեղի տալու համար: Ուստի Ձեր Սրբազնութեան մինչև յայսօր ինձ ցուցցած հայրական բարեսրտութեան փոխարէն սրտիական սիրոյ երախտապարտ ըլլալս յայտնելով մաղթիմ հրաժարական ողջունիլ ի համբոյր սուրբ Աջդ և մնամ

Խարճր Սրբազնութեանդ

Ամենանուաստ ծառայ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿ ՈՒ ՄԱՍԻՆ

Մեր նախորդ թուով պատասխանած էինք Մոխի մէկ քանի դիտողութեանց, որ ըրած էր Ալսուհետև Խորհրդոյ հրատարակած «Ազգային վարժարանաց բարեկարգութեան կանոնադրութեանը» նկատմամբ:

Յամանակն ու Մասին միանգամայն ընթերցողները կրնան դիտել թէ Մոխի դիտողութեանց կարգին հետևելով, իւրաքանչիւրին պատասխանը տուած էինք առանց Մոխի թերի համական ոգւոյն վրայ բան մ'ըսելու և դինքը նախատելու: Ուրիկա խօսք հասկցողները արդէն հասկցած են. և նշմարած են թէ Մոխի դիտողութիւնները արկած անհնչան և անտեղի էին, և թէ ինչ ոգի կար անոնց մէջ...:

Մոխը այս անգամ մեզի պատասխանելու տեղ վախուտի ճանապարհ բռներ է. և մեր առարկութիւնները անհիմն, ու տուած պատասխանիս ալ հակառակ և անյարիր ըսեր ու անցեր է, առանց ապացուցանելու մեր մի խօսքերն իրարու հակառակ և ոչ իմաստները իրարու անյարիր են: Մոխը թէ որ կը բարեհաճի, թող յանձն առնէ հակառակ և անյարիր և անհիմն մտածները ցուցնելու, առանց ասի ընելու, իր ըսածը մեզի հնամոր անհնչան և անտեղի կը մնան. և խօսք չդտնուի մը կամ բան չգիտցուի մը վայելուչ պատասխանը:

Մոխի ընդհակառակութիւն մ'ալ յատկապես կը մատուցանենք ըստ օրում Յոհաննէսի խմբագիրը վարժապետ և Ալսուհետական խորհրդոյ անդամ ըլլալը հրատարակերը և ծանուցած էր. բայց որովհետև Յոհաննէսի խմբագրին վարժապետ ըլլալը արդէն ամէն մարդ գիտէ, և այդ պաշտօնն ալ մեծ պատիւ կը սեպէ իրեն յիշեցնել խմբագիրը, չգիտցուելը թէ ինչ պատճառաւ այդ յիշատակութիւնը կ'ընէ Մոխը, միտքերու իրմէ գիտողութիւն և օրինաւոր պատասխան կ'ընդասանէը...:

---

* Պ. Խմբագիր.

Յունիս 28 ին Հիսար գտնուելով՝ բարեբաղդութիւն ունեցայ չարհանա աշակերտաց քննութեան մը անձամբ ներկայանալու: Այն աշակերտները որոնք ազգաս արհեստասիրութիւն կը ցուցնային, վից ամիսէ ի վեր նոյն գիւղին մէջ հաստատած Միսրոպեան ընկերութեան անխոնջ և անձանձիր գործակատարութեամբը ուսման կը պարապէին: յիշեալ ազգօգուտ ընկերութեան ծախիւք վարձած յատակ տներ մէջ երկոյ յանձնուելով:

Քննութեան առնն զբաղացնելէ ետոյ որ աշակերտք Հայկեան քերականութեան, Թուաբանութեան, Աշխարհագրութեան հարցմանց գոհացուցիչ պատասխաններ տալէն զատ Գազդիկեան լեզուն իսկ Թոմաճեանց կը համարձակէին, որ ապացոյց մ'է յիշեալ բարեգործական ընկերութեան անգամոց ջանից, և որուն համար ալ արժանի ձշմարիտ հայրենասիրաց խորին ընդհակառակութեանը:

Տեր երկինք տեսնել մեզ ուրիշ բարեգործական ընկերութիւններ, որոնք ազգին օգտին ծառայելու աշխատէին, և ոչ թէ լոկ տեսակ մը պարծենային առանց գործ մը ունենալու:

10 Յունիս. 1864. Միտամ անձնանուաէր աղգիս

Ս. ՍՐՄԱՔԻՇԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՂԱՔԱԿԱՆ

Դուռագիր՝ ի պէտս նախակրթական վարժարանաց

(Վան Ա. Տարի)

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ

ՑԱՋԻՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՆ

Մեծարգոյ Սիմէոն ազա Ալեքսէեանի աշխատասիրութեամբ լոյս կ'ընծայուի այս ընտիր Դասագիրքը, որ նախակրթական վարժարանաց մէջ գործածուելու խիստ յարմարութիւն ունի. և որ կը պարունակէ Քաղաքական աշխարհագրութեան տեղագրական մասը. և վերջն ալ Հայաստանի համառօտ աշխարհագրութիւնը, որ Ազգային գիտութիւն ըսուելոյն խիստ կարևոր և անհրաժեշտ առանձին է: Ալեծարգոյ Հեղինակը կը խոստանայ յիշեալ դասագրքին յատկացուցեալ մէջ ուրիշ պատրաստած գասագրքի մը քիչ առնէն հրատարակութիւնը, այն է Քաղաքական Աշխարհագրութեան պատմական և վիճակագրական մասը պարունակող Աշխարհագրութիւն մը: կը ծախուի ամէն Հայ գրավաճառաց քով.

Գին 7 դուռշ:

ՏՆՕՐԵՆ = ԹՄՐԱԳԻՐ

ՍՏԵՓԱՆ Գ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՏԻՍԵԱՆ